ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2018/197

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.12.2018թ. թիվ 27/26-3/23785-18 գրությամբ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00088004/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.12.2018թ. թիվ 1.1/5213-18 գրության հիման վրա, 20.12.2018թ. նախաձեռնել է «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը 14.12.2018թ. թիվ 1.1/5213-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի կողմից զանազան կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի 2-րդ չափաբաժնով (աթոռ գրասենյակային) առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ նույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետով՝ գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժել է Մասնակցի հայտը,

և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ին»:

Պատվիրատուն՝ պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն 09.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Գործի հակիրճ նկարագրությունը.

ՀՀ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից զանազան կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 03.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն, առաջնորդվելով ՀՀ կառավարության 18.05.2018թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, համակարգի միջոցով ծանուցել է առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացրել՝ ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման՝ համաձայն ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետի:

Հանձնաժողովը որոշեց՝ նիստը վերսկսել ՀՀ ֆինանսների նախարարությունից գրավոր պարզաբանումը ստանալուց և համակարգում փոփոխություններ կատարելուց հետո:

Նույն արձանագրության 3-րդ կետով «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը 07.12.2018թ. վերսկսված նիստով արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.11.2018թ. Պատվիրատուին ուղղված թիվ 01.1/27-1/21283-18 գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդ համակարգում անհրաժեշտ կարգավորումները տեղի են ունեցել 07.12.2018թ.-ին, ուստի գնահատող հանձնաժողովը նույն օրով հրավիրված նիստով մերժեց «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարեց հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի կողմից զանազան կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետև գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության 18.05.2018թ. 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի՝

համակարգի միջոցով ծանուցել է առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին և առաջարկել ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2 կետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացրել, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման համաձայն՝ ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետի ...:

Իսկ նույն արձանագրության 3-րդ կետով «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը 07.12.2018թ. վերսկսված նիստով արձանագրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.11.2018թ. Պատվիրատուին ուղղված թիվ 01.1/27-1/21283-18 գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդի համակարգում անհրաժեշտ կարգավորումները տեղի են ունեցել 07.12.2018թ.-ին, ուստի գնահատող հանձնաժողովը նույն օրով հրավիրված նիստով մերժեց «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարեց հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին:

Վերոգրյալի հետ կապված հայտնում ենք, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը ստացել է 06.11.2018թ., որը ուղարկվել էր 05.11.2018թ. ժամը 18:57-ին:

Հայտնում ենք, որ ծանուցման մեջ նշված հղումով անհնար էր մուտք գործել համակարգ, որը կրկնել ենք 3-4 անգամ, սակայն համակարգչում բացվում էր նոր պատուհան՝ 404-Page Not Found-Անհայտ հերթական համար:

07.11.2018թ. կապ ենք հաստատել ՀՀ ֆինանսների՝ նախարարության թեժ գիծ և ներկայացրել առաջացած խնդիրը, որի արդյունքում պարզվել է (տեղեկատվությունը հայտնվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից), որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն թյուրմացաբար օգտագործում է 2 օգտանուն՝ senda456 և senda123:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ Ընկերությունը «armeps» էլեկտրոնային համակարգում մշտապես աշխատել է «senda456» օգտանունով: Հաշվի առնելով, որ մրցույթները այսուհետև իրականացվելու են էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ Ընկերությունը գրանցել էր նոր օգտանուն՝ senda123, քանի որ առաջին անգամ էլեկտրոնային աճուրդի համար մուտք գործելով առաջին՝ senda456 օգտանունով, էլեկտրոնային աճուրդի համակարգը թույլ չի տվել այս օգտանունով գործողություններ կատարել, հայտնելով, որ այս նույն անունով օգտատեր արդեն կա: Այդ իսկ պատճառով էլեկտրոնային աճուրդի համակարգում աշխատելու համար գրանցվել է երկրորդ օգտանունը: Ըստ ՀՀ ֆինանսների նախարության «Թեժ գիծ» ծառայության հայտնած տեղեկատվության՝ էլեկտրոնային աճուրդի համակարգում Ընկերության մոտ առաջացած տեխնիկական խնդրի պատճառը երկու օգտանունների առկայությունն է:

Այդ իսկ պատճառով «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից 08.11.2018թ. դիմում է ներակայցվել ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալին, որով մասնավորապես խնդրել ենք ապաակտիվացնել «senda123» օգտանունը, իսկ «senda456» օգտանունը թողնել ակտիվ:

Արդյունքում, 09.11.2018թ. Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է ծանուցում, համաձայն որի՝ էլ. աճուրդի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին Ընկերության համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որոնցում նկատվել են հետևյալ թերությունները՝ սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն ընդհանրապես չեն ներկայացվել: Առաջարկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները:

Հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ապաակտիվացվեց «senda123» օգտանունը, սակայն առաջացան նոր խնդիրներ՝ էլ. աճուրդով ընթացիկ

(անավարտ) մրցույթների փաստաթղթերը «senda123» օգտանունով ուղարկելու հետ կապված, քանի որ այս պարագայում ակտիվ էր «senda456» օգտանունը, որով անհնար էր դարձել էլ. աճուրդ մուտք գործել և ուղարկել անավարտ մրցույթների փաստաթղթերը, որոնք ներկայացվել են «senda123» օգտանունով:

Այս պարագայում ևս դիմում ներկայացվեց ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալին, որում մասնավորապես ասվում է, որ անավարտ մրցույթների փաստաթղթավորումը վերջնական ավարտին հասցնելու նպատակով՝ Ընկերությունը խնդրում է ակտիվացնել «senda123» օգտանունը: Սույնով Ընկերությունը պարտավորվել է, այսուհետ մրցույթներին մասնակցել «senda456» օգտանունով, իսկ «senda123» օգտանունն օգտագործել միմիայն անավարտ մրցույթները ավարտին հասցնելու նպատակով, որից հետո ևս մեկ անգամ կդիմի ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «senda123» օգտանունը վերջնական ապաակտիվացնելու կապակցությամբ:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունից որևէ պատասխան չստանալով՝ ստեղծվեց մի իրավիճակ, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն այդպես էլ չկարողացավ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ներկայացնել որակավորման փաստաթղթերը՝ էլեկտրոնային աճուրդի համակարգի համապատասխան բաժին մուտք գործելու հնարավարությունից զրկված լինելու պատճառով:

Տվյալ պարագայում գտնում ենք, որ առկա չէ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից միտումնավոր որակավորման փաստաթղթեր չուղարկելու փաստ, այլ առկա է տեխնիկական խոտան, որի պատճառով «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն ոչ միայն զրկվել է Աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվելու հանգամանքից և կրել ֆինանսական վնաս, քանի որ արդեն իսկ գնվել էր բարձրորակ կահույք վերոնշված չափաբաժնի մասով, որոնց օրինակները ներկայացվել էին նաև Ազգային ժողովին, այլ նաև, ինչը շատ կարևոր է, կանգնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վտանգի առջև:

Ավելին, նշված ողջ ժամանակահատվածում «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն ձեռնարկել է բոլոր միջոցները, դիմել թե՛ ՀՀ ֆինանսների նախարարությանը, թե՛ Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փորձելով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը

ներկայացնել հանձնաժողովին և ապացուցել, որ օբյեկտիվորեն չի կարողանում համակարգի միջոցով ուղարկել փաստաթղթերը, սակայն՝ ապարդյուն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Արթուր Պարանյանը և Հասմիկ Ենգոյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/197 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 27/26-3/23785-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 14.12.2018թ. թիվ 1.1/5213-18 գրությունը, «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.11.2018թ. նիստի թիվ 2 և 09.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցութային հայտը, «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի 09.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար զանազան կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն՝ Աճուրդի 1-ից 3-րդ չափաբաժինների համար:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 2-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 03.11.2018թ. հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով Ընկերությանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 7-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ծանուցել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումը ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը 08.11.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված թիվ 11-01 գրությամբ հայտնել է, որ մասնակցում է պետության կարիքների, ինչպես նաև այլ կազմակերպությունների համար անհրաժեշտ ապրանքների մատակարարման նպատակով անցկացվող մրցույթներին: Թյուրիմացաբար, Ընկերության կողմից օգտագործվում է 2 օգտանուն, դրանք են «senda456» և «senda123»: Ընկերությունը խնդրել է ապաակտիվացնել «senda123» օգտանունը՝ «senda456» օգտանունը թողնելով ակտիվ:

«ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն՝ 10.11.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված մեկ այլ՝ թիվ 11-02 գրությամբ հայտնել է հետևյալը.

««senda123» օգտանունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ապաակտիվացնելուց հետո պարզվել է, որ Ընկերությունն ունի անավարտ մրցույթներ, որոնք հնարավոր չէ ավարտին հասցնել նոր օգտանունով: Ընկերությունը նշել է, որ հենց այդ պատճառով չի կարողացել ներկայացնել «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, ինչի արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

Ուստի, անավարտ մրցույթների փաստաթղթավորումը վերջնական ավարտին հասցնելու նպատակով՝ Ընկերությունը խնդրել է ակտիվացնել «senda123» օգտանունը: Սույնով Ընկերությունը պարտավորվել է այսուհետ մրցույթներին մասնակցել «senda456» օգտանունով, իսկ «senda123» օգտանունը օգտագործել՝ անավարտ մրցույթները ավարտին

հասցնելու կապակցությամբ, որից հետո ևս մեկ անգամ կդիմի ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «senda123» օգտանունը վերջնական ապաակտիվացնելու կապակցությամբ:»:

Այնուհետև, 09.11.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ Աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման՝ ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

Հանձնաժողովն արձանագրել է նաև հետևյալը. «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելու պարագայում էլ. աճուրդի համակարգում որպես հաջորդ փուլ նշվել է «մինչև որակավորման շտկման ամփոփում», ինչից ենթադրվում է, որ համակարգը տվյալ մասնակցին փաստաթղթերը շտկելու, այսինքն՝ կցելու և ուղարկելու հնարավորություն է տալիս, ուստի ստեղծված իրավիճակից ելնելով՝ որոշում կայացվեց նիստը կասեցնել, և համապատասխան գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով տալ պարզաբանում, թե տվյալ դեպքում պե՞տք է արդյոք առաջնորդվել Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետով և մերժել մասնակցի հայտը, իսկ եթե անհրաժեշտ է առաջնորդվել էլեկտրոնային աճուրդի համակարգով, ապա հնարավորություն տալ նույն համակարգում վերականգնել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը:

Հանձնաժողովը որոշեց նիստը վերսկսել ՀՀ ֆինանսների նախարարությունից գրավոր պարզաբանում ստանալուց և համակարգում անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց հետո»:

Պատվիրատուն 09.11.2018թ. թիվ 1.1/4861-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետով, հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժել է

մասնակցի հայտը և էլ. աճուրդ համակարգում վերջինիս հայտը գնահատել անբավարար, ինչից հետո համակարգողը թյուրիմացաբար սեղմել է «մասնակցության իրավունք» սեղմակը, ինչի արդյունքում տվյալ մասնակցի հայտը նշված համակարգում համարվել է մերժված: Միևնույն ժամանակ, էլ. աճուրդի համակարգում որպես հաջորդ փուլ նշվել է «մինչև որակավորման շտկման ամփոփում», ինչից ենթադրվում է, որ համակարգը մասնակցին փաստաթղթերը շտկելու, այսինքն՝ կցելու և ուղարկելու հնարավորություն է տալիս:

Ստեղծված իրավիճակից ելնելով, խնդրում ենք տալ պարզաբանում, տվյալ դեպքում պե՞տք է արդյոք առաջնորդվել Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետով և մերժել մասնակցի հայտը, իսկ եթե անհրաժեշտ է առաջնորդվել էլեկտրոնային աճուրդի համակարգով, ապա խնդրում ենք հնարավորություն տալ նույն համակարգում վերականգնել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը»:

Ի պատասխան վերը նշված գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.11.2018թ. թիվ 1/10357-18 գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով, որ գրության համաձայն «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստթղթերը, գտնում ենք, որ վերջինիս հայտը ենթակա է մերժման»:

Հանձնաժողովը՝ 07.12.2018թ. վերսկսելով 09.11.2018թ. կասեցված նիստը, նույն արձանագրության 3-րդ կետով արձանագրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.11.2018թ. Պատվիրատուին ուղղված թիվ 01.1/27-1/21283-18 գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդ համակարգում անհրաժեշտ կարգավորումները տեղի են ունեցել 07.12.2018թ.-ին, ուստի գնահատող հանձնաժողովը նույն օրով հրավիրված նիստով մերժել է «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է հայտարարել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի 09.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումն ամբողջությամբ:

«ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով Բողոքներ քննող անձը Ընկերությունից պահանջեց, որպեսզի վերջինս ներկայացնի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվություն առ այն, որ էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով որակավորման փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհնարինության պատճառը երկու օգտնունների միաժամանակյա առկայությունն է:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց 14.01.2019թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությունը, որով վերջինս նախարարությունից խնդրել է պարզաբանել հետևյալը.

«1. Հանձնարարել «Թեժ գիծ» ծառայությանը, որպեսզի վերջինս հաստատի, որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն 07.11.2018թ. ահազանգել է նշված ծառայությանը, և խնդիրը ուսումնասիրելուց հետո ծառայության աշխատակիցները հայտնել են, որ տվյալ էլեկտրոնային աճուրդի համակարգում Ընկերության մոտ առաջացած տեխնիկական խնդրի պատճառը երկու օգտանունի առկայությունն է (վերոհիշհալ փաստը կարող է հաստատվել ահազանգի ձայնագրությամբ):

2. Հանձնարարել էլեկտրոնային աճուրդները սպասարկող համապատասխան ստորաբաժանմանը՝ ուսումնասիրել ներկայացված խնդիրը և հայտնել, թե ինչը կարող էր խոչընդոտել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, քանի որ որակավորման փաստաթղթերը ներբեռնելու պատուհանը բացելիս՝ բացվում էր նոր պատուհան՝ «404-Page Not Found-Անհայտ հերթական համար» գրառմամբ»:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա»

պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

• 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

• 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում

հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

• 7.16 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

• 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

• 16-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

- Հանձնաժողովը ծանուցել է «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումը ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

- Ընկերությունը 08.11.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված թիվ 11-01 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների armeps և էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգերում թյուրիմացաբար Ընկերության կողմից օգտագործվում է 2 օգտանուն, դրանք են՝ «senda456» և «senda123»: Ընկերությունը խնդրել է ապաակտիվացնել «senda123» օգտանունը՝ «senda456» օգտանունը թողնելով ակտիվ:

- 09.11.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ Աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

- Պատվիրատուն 09.11.2018թ. թիվ 1.1/4861-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով տալ պարզաբանում «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման վերաբերյալ:

- ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.11.2018թ. թիվ 1/10357-18 գրությամբ հայտնել է, որ քանի որ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստթղթերը, հետևաբար, վերջինիս հայտը ենթակա է մերժման:

- 07.12.2018թ. Հանձնաժողովը որոշել է մերժել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- Բողոքներ քննող անձի պահանջով Ընկերությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով տրամադրել հավաստող տեղեկատվություն առ այն, որ Ընկերության կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով որակավորման փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհնարինության պատճառ է հանդիսացել երկու օգտնունների միաժամանակյա առկայությունը:

- «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին չներկայացվեց որևէ ապացույց առ այն, որ Ընկերության կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով որակավորման փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառ է հանդիսացել երկու օգտնունների միաժամանակյա առկայությունը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելով՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.12.2018թ. թիվ 27/26-3/23785-18 գրությամբ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00088004/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**